

Բանալի բառեր՝ թվային տնտեսություն, էլեկտրոնային գործարարություն, էլեկտրոնային կառավարում, ինտերնետ, էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային վճարային համակարգեր, էլեկտրոնային գրագիտություն, սոցիալական մեդիա, SS:

ՀՊՏ 330:36

ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Աննա ՄԻՆԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՊՏ կառավարման ամբիոնի դոցենտ

Վերջին տարիներին առօրյայում և մասնագիտական գրականության մեջ հաճախ է գործածվում «Թվային տնտեսություն» եզրը: Թվային տնտեսության հիմքում ընկած են Տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք իրենց բուռն զարգացումը ստացան 20-րդ դարի վերջում և 21-րդ դարում: Դրանց հեղափոխական ազդեցությունը տնտեսության վրա «հետինդուստրիալ տնտեսության» ձևավորման խթանիչ ուժը դարձան: Նման տնտեսությանը բնորոշ են նախ և առաջ ծառայությունների ոլորտի տեսակարար կշռի ավելացումը, գիտատար ճյուղերի զարգացումը, տեղեկատվության և մարդկային կապիտալի՝ որպես կարևորագույն ռեսուրսների առանձնացումը, ինովացիոն գործունեության խրախուսումը և այլն: Այսպիսով, վերոհիշյալ փոփոխությունները բերեցին նոր՝ «թվային տնտեսության» ձևավորմանը, որտեղ տեղեկատվությունը հանդես է գալիս որպես առանցքային ռեսուրս ինչպես հասարակության շրջանում, այնպես էլ տնտեսական գործունեության մեջ: «Թվային տնտեսություն» կատեգորիայի ծագումը կապվում է Նիկոլաս Նեգրոպոնտեի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով հայտնի ամերիկացի գիտնականի անվան հետ, ով ներկայացրել էր այն որպես ատոմների շարժի փոխակերպում բիթերի շարժման: Այս տնտեսությունը բնորոշվում է վիրտուալությամբ, ապրանքների «քաշի բացակայությամբ»: Եթե նախկինում կազմակերպությունների արտադրողականության աճը բնորոշվում էր նրանց հզորությունների, սարքավորումների, աշխատակիցների թվաքանակի ավելացմամբ, ապա ներկայումս կազմակերպությունների համար կարևորագույն ռեսուրս է դառնում տեղեկատվությունը: Թվային տնտեսությունում ինտերնետ առևտրային հրապարակները անսահմանափակ են և նույնիսկ ամենափոքր կազմակերպությունները կարող են մրցակցել շուկայում մեծ տեսակարար կշիռ ունեցող կազմակերպությունների հետ:

Սկզբնական շրջանում «Թվային տնտեսությունը» իր մեջ ներառում էր միայն էլեկտրոնային առևտրի և ծառայությունների ոլորտը, սակայն այսօր այն ընդլայնել է գործունեության շրջանակները և ներառում է կրթության, առողջապահության և բանկային ծառայությունների ոլորտները: Դրա ամբաժանելի մասն է կազմում նաև «էլեկտրոնային կառավարում» ու «էլեկտրոնային կառավարությունը»՝ իր G2C, B2G, G2G, G2E մոդելներով: Իհարկե այս բոլոր գործընթացներում իր ուրույն դերն ունի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ու էլեկտրոնային ստորագրությունը: Ընդհանրապես թվային տնտեսությունը ամենաարագ զարգացող տնտեսության ձևերից է, քանի որ դրա հիմքում ընկած է ինտերնետն ու բջջային կապը, իսկ դրանց կատարելագործումն ու զարգացումն ակնհայտ է:

Թվային տնտեսությունն ունի մի շարք առավելություններ, մասնավորապես՝ այս դեպքում առաջին հերթին բարձրանում է տնտեսական գործընթացների արդյունավետությունը: Դա կապված է անձնակազմի վրա կատարվող, պահեստային ծախսերի կրճատմամբ, նորագույն տեխնոլոգիաները թույլ են տալիս նվազեցնել սարքավորումների վրա կատարվող ծախսերը, բարձրացնել թողարկվող ապրանքի որակը: Թվային տնտեսությունում գործող տարբերակները ձեռք են բերում մրցակցային առավելություններ ինչպես թվային, այնպես էլ ավանդական միջավայրում: Սակայն, միևնույն ժամանակ, թվային տնտեսությունը կարող է հանգեցնել նաև գործազրկության մակարդակի բարձրացմանը, քանի որ նորագույն տեխնոլոգիաները կարող են հանգեցնել մեծաքանակ աշխատատեղերի կրճատմանը: Իհարկե, դրանք կուղեկցվեն տնտեսական նոր ոլորտներում աշխատատեղերի պահանջարկով, սակայն դրանց թիվը կարող է անհամեմատ քիչ լինել:

Բնականաբար, զարգացած պետություններում «թվային տնտեսությունը» սկսեց ավելի շուտ արմատավորվել: Դրա լավագույն իրացնողներից մեկը դարձավ Մեծ Բրիտանիան, որտեղ առավել աստիճանական ձևով սկսեց թվային վերափոխումը և այն հետագայում հիանալի օրինակ դարձավ այլ պետությունների համար: Որպես կանոն, «թվային տնտեսությունը» պահանջում է մեծ ներդրումներ թվային տեխնոլոգիաների զարգացման մեջ:

Ներկայումս շատ պետություններում թվային տնտեսության և թվային հասարակության ձևավորմանը մեծ տեղ են հատկացնում, մասնավորապես դրա ապացույցն են մշակված և հաստատված ռազմավարություններն ու ծրագրերը «Թվային Եվրոպա», «Թվային Սինգապուր», «էլեկտրոնային Ռուսաստան» և այլն ծրագրեր: Ընդհանրապես «Թվային տնտեսության» ձևավորման կարևորագույն գրավականներից է էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, այսպես՝ էլեկտրոնային կառավարման կայքեր ունեն ՄԱԿ-ի բոլոր 193 պետությունները, իսկ առավել լայն տարածում ունեցող ծառայություններից են հարկային, մաքսային ծառայությունները, էլեկտրոնային գրանցումը, նամակներ կառավարությանը և այլն: Դեռևս 1990-ական թվականներից զարգացած պետությունները սկսեցին ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգերը, այսպես 1999թ-ին Գերմանիայում մեկնարկեց առցանց ծառայությունների մատուցման գործընթացը՝ էլեկտրոնային թվային ստորագրության հիման վրա: 2000թ-ին Մեծ Բրիտանիայում սկսեց իրացվել E-citizen, e-business, e-government ծրագիրը, որը ենթադրում էր բոլոր տեսակի էլեկտրոնային ծառայությունների մատուցում և զարգացում՝ ինտերնետի, բջջային կապի, թվային հեռուստատեսության միջոցով: Ռուսաստանում այն ներդրվեց 2001թ-ին «էլեկտրոնային Ռուսաստան 2002-2010թթ-ին» ֆեդերալ նպատակային ծրագրով: ԱՄՆ-ում էլեկտրոնային կառավարումն իրացվում է առանձին նահանգների կառավարման մակարդակով: Այս բնագավառում լավագույն նահանգներից մեկը

Ֆլորիդան է, որտեղ կարելի է ստանալ ընդհանուր տեղեկատվություն ինչպես նաև հանգի վերաբերյալ, այնպես էլ օգտվել բազմաթիվ կարևոր տվյալներից և գործառնություններից: Էլեկտրոնային կառավարման բնագավառում լավագույններից է նաև Յարավային Կորեան, որտեղ «Էլեկտրոնային ժողովրդավարություն» մոդելի ձևավորման ճանապարհին հիմնական շեշտադրումը դրվեց բնակչության տեղեկատվական պահանջները բավարարման և տեղեկատվա-կոմունիկացիոն տեխնոլոգիաների ներդրման մեջ մշակույթի և կրթության ոլորտ: Նրանք հիմնականում կարևորեցին էլեկտրոնային կոմունիկացիաների զարգացման գաղափարը, քանի որ միասնական տեղեկատվական միջավայրի ստեղծումը ոչ միայն ուժեղացնում է պետության դիրքը, այլև ժողովրդին դարձնում է պետական կառավարման ակտիվ մասնակից: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա այստեղ էլեկտրոնային կառավարման ներդրման առաջին քայլերը սկսեցին իրականացվել 2000-ին: Քաղաքացիների, ձեռնարկությունների և կառավարության կապն ապահովելու համար ստեղծվեցին մի շարք բարդ ու ինտեգրված համակարգեր, որոնք ամփոփվեցին e-gov.am կայքում: Չնայած նրան, որ էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացման գործընթացը ՀՀ-ում իրականացվում է շատ արագ, այդուամենայնիվ, էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը բնակչության կողմից դեռևս ակտիվ չէ: Բնականաբար, էլեկտրոնային կառավարման մոդելները տարբեր են և դրանց մշակման ու իրագործման փուլում պարտադիր հաշվի է առնվում կոնկրետ երկրի տնտեսական և հասարակական առանձնահատկությունները: Չնայած տարբերություններին, այդուամենայնիվ դրանք ունեն որոշակի ընդհանրություններ. նախ՝ բնակչության ներգրավվածության մակարդակի բարձրացումը թվային միջավայրի ձևավորման մեջ, թվային ճեղքվածքի նվազեցումը երկրի տարբեր շրջանների միջև, տնտեսավարող սուբյեկտների միջև փոխազդեցությունը ապահովող ենթակառուցվածքների ձևավորումը, հատկապես G2C, G2B մոդելների կատարելագործումը, ինովացիոն տեխնոլոգիաների, էլեկտրոնային առևտրի զարգացումը, SS ոլորտում ներգրավվածների թվաքանակի ավելացումը, թվային ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալի ավելացումը և այլն:

Թվային տնտեսության ձևավորման գործում իր ուրույն տեղն ունի անվտանգության համապատասխան մակարդակի ապահովումը թվային տնտեսությունում գործող սուբյեկտների համար: Իհարկե սա առաջին հերթին կապված է պետական քաղաքականության հետ՝ արտաքին և ներքին վտանգների դեմ պայքարելու նպատակով: Այսպես, ՀՀ կառավարությունը 2015թ. օգոստոսի 31-ի համար 1093-Ն որոշմամբ սահմանվել է պետական տեղեկատվական համակարգերի ստեղծման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից այդ համակարգերին միանալու համար անհրաժեշտ տեխնիկական պահանջների հետ կապված հարաբերությունները: Դեռևս 2009թ-ի հունիսի 26-ին ՀՀ նախագահի թիվ ԼԿ-97-Ն կարգադրությամբ հաստատվել է «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը», արդեն իսկ գործում է «Կիբերհանցագործությունների մասին» կոնվենցիան, սակայն պետք է նշել, որ այս ոլորտը պետք է մշտապես գտնվի պետական իշխանության ուշադրության կենտրոնում, քանի որ նախ գոյություն ունի արտաքին հարձակումների մեծ վտանգ և պետք է ստեղծել հուսալի տեղեկատվական համակարգեր, հակավիրուսային միջոցներ և դրանց թարմացման մշտական գործընթացներ իրականացնել՝ ապահովելու էլեկտրոնային միջավայրի անվտանգությունը:

Թվային տնտեսության զարգացումն ուղեկցվում է նաև մի շարք արձատական փոփոխություններով, հատկապես վճարային համակարգում: Այսօր գնալով մեծանում է էլեկտրոնային վճարային համակարգերի կիրառման հնարավորությունները, էլեկտրոնային կանխիկների օգտագործումը և այլն:

ՀՀ-ում վճարային քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2016թ-ին կազմել է 1410267,99 մլն դրամ, 2015թ-ին՝ 1440054,98 մլն, իսկ 2014թ-ին՝ 1274805,80 մլն դրամ, իսկ դրանց քանակը 2016թ-ին կազմել է 31285948՝ նախորդ 2015թ-ի 297447907-ի և 2014թ-ի՝ 24822723-ի համեմատ¹: Էլեկտրոնային վճարային հանձնարարականով կատարված գործառնությունների ծավալը 2016թ-ին կազմել է 21961715 մլն դրամ 2015թ-ի 19605411 մլն դրամի և 2014թ-ի 18297163 մլն դրամի դիմաց, իսկ դրանց քանակը՝ 2016թ-ին կազմել է 13996725, 2015թ-ին 11755269, իսկ 2014թ-ին՝ 9754949²: Քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը 2016թ-ին կազմել է 218525 մլն դրամ, իսկ 2015թ-ին 165139 մլն դրամ, 2014թ-ին՝ 132217 մլն դրամ, իսկ դրանց քանակը՝ 2016թ-ին 8195997, 2015թ-ին՝ 6104910, իսկ 2014թ-ին՝ 4565205: Այսպիսով, ինչպես երևում է բերված տվյալներից, էլեկտրոնային վճարումներով գործառնությունների և քանակը, և ծավալը տարեց տարի ավելանում է, ինչը փաստում է էլեկտրոնային գործառնությունների ավելացման, հետևապես նաև թվային տնտեսության ձևավորման նախադրյալների մասին:

Ինչպես մյուս պետություններում, այնպես էլ ՀՀ-ում թվային տնտեսության զարգացումը առաջին հերթին պետք է ուղեկցվի վիրտուալ առևտրի տեսակարար կշռի ավելացմամբ: Այսպես, եթե դիտարկենք ինտերնետ վաճառքի ծավալները աշխարհում մի քանի տարվա կտրվածքով, կարող ենք տեսնել հետևյալ պատկերը՝

- 2014թ՝ 1,336 մլրդ ԱՄՆ դոլլար
- 2015թ՝ 1,548 մլրդ ԱՄՆ դոլլար
- 2016թ՝ 1,859 մլրդ ԱՄՆ դոլլար
- 2017թ. 2,290 մլրդ ԱՄՆ դոլլար
- 2018թ. նախատեսվում է 2,774 մլրդ ԱՄՆ դոլլար³

Ինչպես տեսնում ենք, ինտերնետ վաճառքի ծավալը տարեց տարի ավելանում է, իսկ դա նշանակում է, որ թվային տնտեսությունը ձեռք է բերում առավել մեծ մասշտաբներ: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա էլեկտրոնային առևտրին առնչվող կայքերի այցելության վերաբերյալ տվյալներ հրապարակում է «Ալեքսա»-ն, որը գլոբալ ինտերնետի չափման համակարգի առաջատար մատակարարն է: Ալեքսայի կիրառմամբ դիտարկվել է ՀՀ-ում առաջատար 500 կայքերի ցանկը՝ հիմնված այցելումների թվաքանակի վրա՝ էլեկտրոնային առևտրի առնչվող լավագույն վեբ-կայքերի բացահայտման համար: Դրանք են՝ list.am (10-րդ տեղ), amazon.com (17-րդ տեղ), aliexpress.com (19-րդ տեղ), ebay.com (21-րդ տեղ), Paypal (52-րդ տեղ), alibaba.com (60-րդ տեղ), arca.am (68-րդ տեղ), menu.am (69-րդ տեղ)⁴: Պետք է նշել, որ ՀՀ-ում բացակայում է մանրամասն տեղեկատվությունը տեղական էլեկտրոնային առևտրի վերաբերյալ: Էլեկտրոնային առևտրի զարգացման մասին փաստում են էլեկտրոնային վճարային հանձնարարականով կատարված գործառնությունների ծավալի ավելացումը, անկանխիկ գործառնությունների ծավալի և քանակի մեծացումը և այլն: Իհարկե առավել ամբողջական վերլուծությունը կնպաստի առկա խնդիրների բացահայտմանն ու դրա հետագա զարգացմանը:

¹ Cba.am

² Cba.am

³ www.statista.com

⁴ Alexa.com

Թվային տնտեսության զարգացմանն էապես նպաստում է նաև բջջային տեխնոլոգիաների զարգացումն ու կիրառումը, սոցիալական մեդիաներ (facebook, YouTube, Instagram, LinkedIn և այլն): Վերջին ժամանակներս ՀՀ-ում ևս նկատվում է բավականին բուռն աճ այս ոլորտում, այսպես 2017թ-ին սոցիալական մեդիաների ոլորտում Հայաստանի ցանցային հատվածում նկատվում են փոփոխություններ՝ նախորդ տարվա ցուցանիշների համեմատ: Հիմնականում լուրջ փոփոխություններ են հնտագրամից օգտվողների կտրուկ աճը: Օդոնկլասնիկի կայքը կարծես զիջում է, ըստ Liveinternet-ի տվյալների, Օդոնկլասնիկի այցելուների թիվը 2017թ-ին նվազել է և հասել է օրական կտրվածքով մոտ 692 հազ մարդ: 2017թ-ի երկրորդ եռամսյակում ֆեյսբուքի այցելուների թիվն ամսական կտրվածքով հասնում է 1մլն100հազարի, օրական կտրվածքով հարթակ այցելում է մոտ 690 հազար օգտատեր և մեկ տարվա կտրվածքով ֆեյսբուքի այցելուների թվաքանակը աճել է մոտ 10տոկոսով: Ըստ Սիմիլարվեբի գնահատականի ֆեյսբուք այցելուների թվաքանակը գերազանցում է օդոնկլասնիկի այցելուներին: Աճ է նկատվում նաև ՅուԹյուբի այցելուների շրջանում, որը դառնում է ակտիվ վիդեոբլոգային հարթակ ՀՀ-ում: Լսարանի լուրջ աճ է նկատվում նաև ինստագրամում: Այստեղ Հայաստանից ամսական կտրվածքով այցելուների քանակը հասնում է մոտ 430000 մարդ, իսկ օրական այցելուների քանակը կազմում է 210000: Նախորդ տարվա համեմատությամբ այստեղ նկատվում է կրկնակի աճ: Ինչ վերաբերում է Թվիթեր և Վկոնտակտե հարթակներին, ապա այստեղ դժվար է գնահատականներ տալ, քանի որ Վկոնտակտե-ն ՀՀ-ում չի դառնում ակտիվ սոցիալական հարթակ, իսկ Թվիթերը վիճակագրություն չի տրամադրում փոքր շուկաների վերաբերյալ:

Ըստ similarweb.com-ի տվյալների Հայաստանից ամենայայտնիվ կայքերն են՝

1.	Facebook.com	6.	mail.ru
2.	YouTube.com	7.	vk.com
3.	ok.ru	8.	yandex.ru
4.	google.am	9.	list.am
5.	google.com	10.	google.ru
		11.	instagram.com

Իհարկե սոցիալական մեդիայի ակտիվացումը կարող է նպաստել Հայաստանում թվային տնտեսության արմատավորմանը:

Ուսումնասիրելով թվային տնտեսության զարգացման հեռանկարները՝ չի կարելի անտեսել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կարևորությունը: Այսպես, ՀՀ-ում ՏՀՏ ոլորտի 2012-2016թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2012-2013 թթ-ին ՏՀՏ ոլորտը զրանցել է տարեկան համապատասխանաբար 68 և 11.7 տոկոս աճ: 2014թ-ին 0.5 տոկոս անկում, 2015թ-ին անկումն ավելի է խորացել՝ հասնելով 0.7տոկոսի և միայն 2016թ-ին աճը սկսել է վերականգնվել՝ չնայած բավական համեստ ցուցանիշներով՝ 1.1տոկոս: 2016թ-ին Հայաստանի ՏՀՏ ոլորտի ծավալը կազմել է 238.1մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի 4.7տոկոսը: 2017-ի առաջին եռամսյակում ՏՀՏ ոլորտի իրական աճը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 15.5 տոկոսով և ոլորտի ծավալը կազմել է մոտ 60.6մլրդ դրամ՝ 5.3մլրդ-ի փոխարեն⁵: Իհարկե այս ոլորտի զարգացումը կարող է էապես նպաստել թվային տնտեսության ներդրմանը ՀՀ-ում:

Թվային տնտեսությունը հնարավոր չէ պատկերացնել առանց ինտերնետ օգտատերերի: Այսպես ինտերնետ կապի ներթափանցումը 2015 և 2016թթ ՀՀ-ում փոխվել է մոտ 10 տոկոսով, համապատասխանաբար՝ 55.29 և 64.2 տոկոսով: 2017թ-ին բջջային կապի ընդհանուր բաժանորդների թիվը կազմել է 3462956: Եթե դիտարկենք 2017թ-ի երկրորդ եռամսյակի տվյալները և համեմատենք դրանք առաջին եռամսյակի հետ, ապա կունենանք հետևյալ պատկերը՝

Vivacell՝ 2107603(+33174)

Beeline՝ 913629(+37269)

Ucom՝ 441724(-8906)

Ինտերնետ սպառումն ըստ խոշոր մատակարարների՝

Armentell

Լայնաչերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ՝ 142379՝ -662

չարժական լայնաչերտ կապի բաժանորդագրություն՝ 62231՝ +3649

տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ՝ 387630՝ +40780

Vivacell

Լայնաչերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ՝ 72798՝ -1728

տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդներ՝ 1283151՝ +22279

Ucom

Լայնաչերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ՝ 92402՝ +11260

չարժական լայնաչերտ կապի բաժանորդագրություն՝ 129112՝ +4468

բջջային հեռախոսով ինտերնետից օգտվողները՝ 205298՝ -66675

Rostelecom

Լայնաչերտ ինտերնետ հասանելիության բաժանորդներ՝ 42210՝ +1585⁶

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում հեռահաղորդակցության ոլորտում ընդհանուր առմամբ դրական տեղաշարժ է նկատվում, ինչը կարող է նպաստել թվային տնտեսության զարգացմանը հանրապետությունում:

Թվային տնտեսության տարածմանն էապես կարող է նպաստել նաև բնակչության ինտերնետ գրագիտության մակարդակի բարձրացումը: Իհարկե այս ոլորտում որոշ քայլեր ձեռնարկվել են մեր հանրապետությունում, մասնավորապես «Էլեկտրոնային հասարակություն» հայեցակարգի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, սակայն թվային ճեղքվածքը բավականին մեծ է, ինչը նկատելի է նաև էլեկտրոնային գրագիտության բնագավառում:

Այսպիսով, եթե դիտարկենք թվային տնտեսության բնագավառում առաջատար պետությունների սանդղակը, ապա կարող ենք փաստել, որ BCG սանդղակում ընդգրկված են 85 պետություն: 2016թ-ի տվյալներով սանդղակը գլխավորում է Դանիան, որն ունի 213բալլ, երկրորդ տեղում է Լյուքսեմբուրգը՝ 212բալլով, երրորդը՝ Շվեդիան՝ 208բալլ: Առաջին հնգյակում են հայտնվել նաև Հարավային Կորեան՝ 205 և Նիդերլանդները՝ 198 բալլով: Սանդղակի ամենավերջին տեղում հայտնվել է Կամերունը՝ 12 բալլով⁷: Այս սանդղակում պետության դիրքը որոշվում է այնպիսի ինդեքսների հիման վրա, ինչպիսիք են թվային տեխնոլոգիաների ներդրումը քաղաքացիների, կազմակերպությունների և կառավարության կողմից: Իհարկե, մեր

⁵ Armstat.am

⁶ Armstat.am

⁷ www.bit.do

հանրապետությունը այս սանդղակում առաջատար դիրքեր չի գրավում, սակայն հաշվի առնելով վերջին ժամանակներս նկատվող էական փոփոխությունները թվային տնտեսության զարգացմանը նպաստող բնագավառներում, իրավիճակը կարելի է համարել հուսադրող:

Այսպիսով, ամփոփելով կարելի է ասել, որ «Թվային տնտեսության» զարգացումը ՀՀ-ում կարող է ընթանալ հետևյալ ուղղություններով՝

- ոլորտի պետական կարգավորում, որն իր մեջ ներառում է նաև էլեկտրոնային կառավարման ուղղությամբ տարվող քաղաքականությունը, թվային միջավայրում անվտանգության ապահովումը և այլն

- տեղեկատվական ենթակառուցվածքների ստեղծումն ու տարածումը, մանավորապես բնակչության հասանելիությունը տեկատվական ռեսուրսներին ապահովելու ուղղությամբ, որն իր մեջ ներառում է կապի համակարգը, տվյալների և գիտելիքների բանկի ստեղծումը, ապարատա-ծրագրային միջոցներն ու տեղեկատվության հավաքագրման ապահովումը և այլն

- ինովացիոն ոլորտի զարգացումը

- բնակչության էլեկտրոնային գրագիտության մակարդակի բարձրացումը, կադրերի պատրաստումն ու կրթական վերափոխումները

- էլեկտրոնային գործարարության զարգացումը

- օրենսդրահիրավական բազայի կատարելագործումը, հատկապես «էլեկտրոնային կառավարման մասին», «էլեկտրոնային առևտրի մասին» օրենքների մշակումն ու ընդունումը

- ՏՏ արդյունաբերության զարգացումը

Թվային տնտեսությունը ոչ թե առանձին ոլորտ է, այլ կյանքի նոր որակ, որը հիմք է հանդիսանում էլեկտրոնային կառավարության, տնտեսության, գործարարության, սոցիալական ոլորտի զարգացման համար:

**Ներկայացվել է 23.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.**